




ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ԱՍՏՎԱԾ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Հայ իրականության մեջ քրիստոնեության տարածման և պետական կրոնի գործառության շրջանում կազմվել են (ապա նաև կայունացել) բազմաթիվ բառակապակցություններ, որոնց կազմում կան կրոնական բովանդակություն, երանգավորում ունեցող բաղադրիչներ (հատուկ և հասարակ անուններ), ինչպես օրինակ՝ **Աստուած**, **Քրիստոս**¹, **Յիսուս**, **Հայր**, **Տէր** (**Տեառն**), **խաչ**, **հրեշտակ**, **դրախտ**, **եղեմ հոգի**, **սատանայ** և այլն: Այդ կազմությունները ի սկզբանե մեծ մասամբ գործածվելիս են եղել ուղղակի նշանակությամբ, ապա, լեզվի պատմական զարգացմանը զուգընթաց, դրանց իմաստը մթազնել է, որոշակիորեն վերացարկվել և վերաիմաստավորվել՝ աշդպիսով հեռանալով ստուգաբանական նշանակությունից: Դրանք դարձել են պատրաստի խոսքային միավորներ՝ դարձվածքներ, որոնց կողքին, իհարկե, կան նաև ոչ փոխաբերական նշանակությամբ կառույցներ: Այսպես՝ **Քրիստոսի հարսնացու**, տուն **Աստուծոյ**, **եղեմական խնձոր**, իր **խաչը** կրել, **դժոխքի բաժին դառնալ**, **հրեշտակը գլխին պտույտ գալ**, **սատանա խաղացնող** և այլն: Սրանք վկայվել են Ե դարից սկսած, շատերը կազմվել են ժողովրդական խոսքում, բարբառներում²:

Համեմատելի են աշօրինակ որոշ կապակցություններ հայերենի զարգացման գրաբար և աշխարհաբար գոյավիճակներում:

Գրաբարում (ազատ կապակցություններ). Զի եթէ **տացէ Տէր** յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեացուք զգօրութիւն նոցա (Եղ., էջ 101): Եւ առեալ զմարմին սրբոյն Ներսէսի **զառնն Աստուծոյ** պաշտօնեայք եկեղեցոյն... տաւան ի Թիլն (Բուզ., էջ 184):

¹ Տե՛ս Դ. Գյուրջիւնյան, «Քրիստոս անունը հայերեն կայուն բառակապակցություններում», «Էջմիածին», 1993, Դ—Ե—Զ, էջ 80—87:

² Մի քանի կայուն կապակցություններ ենթադրաբար կարելի է կապել նախաքրիստոնեական ժամանակների հետ, ինչպես՝ **բախտավոր աստղի տակ ծնվել**, **մեկի առաջ խունկ ծխել** և այլն:

Արդի հայերենում (կայուն կապակցություններ՝ խոսքը ոճավորող, երանգավորող դերով)։

Աստված տա.— բաղձանքի արտահայտություն՝ «երանի թե այդպես լինի» նշանակությամբ. կյանքում այնժամ էլ չեն լինի նման բաներ։ Է՛հ, տա՛ **Աստված**, ես էլ կյանքում ուրիշ ոչինչ չեմ երագում (**ՊՍ**, հ. 1, էջ 208)։

Մաքդ Աստծո.— կոչական՝ զարմանքի և հանդիմանության արտահայտություն. Որտե՞ղ էիր, մա՛քդ **Աստծո** (**ԶԽ**, էջ 1)։

Կրոնական բովանդակության բաղադրիչով կայուն կապակցությունների մեջ ամենամեծ խումբը **Աստված** (բրբ. Աստուծ, Աստոծ) բառով ձևավորվածներն են. դրանք 200 միավորից ավելի են³ և գործառական մեծ կշիռ ունեն հայերենում։ **Աստված** բաղադրիչով կայուն կապակցությունները հատկանշվում են կառուցվածքային, իմաստային ու ոճական բազմազանությամբ։

Հիշյալ կապակցություններում մենք նկատել ենք, այսպես կոչված, սերիչ կաղապարներ, և որ այդ կառույցների մի զգալի մասը հանդես է գալիս զանազան տարբերակներով։ Առավելապես այս երկու իրողությունների քննությանն է նվիրված սույն աշխատանքը։

Ասենք, որ հետազոտելիս միևնույն հարթության վրա են դրվում **Աստված** բաղադրիչով այնպիսի կայուն կապակցություններ, որոնք նույնարժեք չեն. այստեղ ունենք դարձվածք (**Աստծո գառ**), ոչ փոխաբերական կայուն բառակապակցություն (**Աստծո խոսք**), տարբեր բնույթի արտահայտություններ՝ բարեմադրություն (**Աստված պահապան**), օրհնանք (**Աստված ողորմի**), երդում (**Աստված վկա**), բաղձանք (**Աստված տա**), անեծք (**Աստված հախներիցդ գա**), այլ կարգի բանաձևեր (**Աստված շնորհավոր անի**) և այլն։

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է դարձվածային տարբերակ համարել դարձվածային միավորների այն տարատեսակները, որոնք գրեթե նույնական են իրենց իմաստներով, ոճական և շարահյուսական դերով, ունեն բառային ընդհանուր անփոփոխակ՝ բառային կազմի մասնակի տարբերությամբ, քերականական (այդ թվում և շարահյուսության) որոշակի տարբերակումով⁴։

Մեզ հետաքրքրող կայուն կապակցությունների մեջ կարելի է առանձնացնել հետևյալ դարձվածային տարբերակները։

Ա. ՔԱՆԱԿԱՅԻՆ (ՔՎԱՆՏԻՏԱՏԻՎ) ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ։ Կարելի է նշել երկանդամ կառույցներ, որոնցից բաղադրիչների հավելումով առաջանում են դարձվածային ուրիշ միավորներ՝ եռանդամ, քառանդամ, հազվադեպ՝ հնգանդամ և ավելի։ Բառային այդ հավելումները, որպես կանոն, սերտանում են սերիչ կաղապարին, ձուլվում նրա իմաստային դաշտին և դարձվածային միավորը դուրս չեն բերում տվյալ կառուցվածքային տեսակի (մոդելի) շրջանակներից։

Սերիչ կաղապար են դառնում հիմնականում «Աստված+բայական բաղադրիչ» անվանաբայական երկանդամ կապակցությունները՝ ենթակայի և ստորոգյալի քերականական հարաբերությամբ, ընդ որում բայական բաղադրիչը բնութագրվում է անցողականությամբ (ներգործական սեռով)։ Որպես օրինաչափություն, բայը դրված է լինում ըղձական եղանակով (եզակի թիվ,

³ Հմմտ. Ս. Ամատունի, «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան», Երևան, 1975։

⁴ Հմմտ. Պ. Ս. Բեդիրյան, «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն», Երևան, 1973, էջ 213 (ըստ Ա. Վ. Կունինի տեսակետի)։

Յ-րդ դեմք), արտահայտում է իղձ, ցանկություն և երանգավորում ամբողջ կապակցությունը՝ նրան հաղորդելով եղանակավորող դեր:

Իմաստային ընդգրկումով քանակային տարբերակները, իբրև օրենք, էապես չեն տարբերվում սերիչ կաղապարներից: Այսպես օրինակ, բարեմաղթության արժեք ունեցող **Աստված պահի** կապակցությունից են սերել նույնաբյուր հետևյալ կառույցները՝ **Աստված ողջ պահի//~ողջ ու առողջ պահի**, **Աստված շեն պահի//~ձեր տունը (սեղանը շեն պահի)**, **Աստված աչքից պահի//~կանաչ ու կտրին արևդ (անվնաս) պահի** և այլն:

Որոշ դեպքերում, սակայն, նկատում ենք իմաստային-գործառական նրբերանգներ: Արդեն հիշատակված **Աստված տա** դարձվածային միավորը, օրինակ, բաղձանքի արտահայտություն է, իսկ նրանից սերածներում ընդհանարվում են նրբիմաստներ: **Աստված տա** սերիչ կաղապարից են ծագել **Աստված կյանք տա**, **Աստված ուժ տա**, **Աստված խելք տա** եռանդամ կառույցները, որոնց հիման վրա էլ առաջացել են դրանց քանակային տարբերակները՝ **Աստված երկար կյանք տա//~քեզ (նրան...) երկար կյանք տա**, **Աստված բազկիդ (թևերիդ, կռներիդ) ուժ տա**, **Աստված քեզ խելք ու միտք տա**: Սերիչ կաղապարի բաղձանքի և մաղթանքի նշանակությունից ածանցյալ ձևերում գերակշռող է առավելաբար վերջինը:

Նույն ձևով համեմատելի են **Աստված անի** և **Աստված հեռու անի //~հեռ ու հեռու անի** տարբերակները՝ մյուս կողմից: Չնայած որ դժվար է անվերապահորեն ասել, թե այս առաջինից են սերել մյուսները. գուցադրվող այս միավորների անկախաբար առաջ գալը ևս միանգամայն հնարավոր է: Սակայն, այնուամենայնիվ, **Աստված** բաղադրիչով դարձվածային կաղապարների առկայությունը կասկած չի հարուցում:

Համեմատաբար սահմանափակ ծավալում ունեն **ազատել**, **կատարել** և **ողորմել** բայական բաղադրիչներով կաղապարները. հմմտ. **Աստված ազատի//~չարից ազատի//~ավելի վատից ազատի**, **Աստված կատարի//~բարին կատարի**, **Աստված ողորմի//~ողորմի հոգուն**: Թվում է, թե բացատրության կարիք չի գգում այն փաստը, որ սերիչ կաղապարների բայական անդամի դերով հանդես են գալիս **անել**, **տալ**, **պահել**, **ազատել** և առնչակից այլ հասկացություններ արտահայտող բառեր. սրանք մատնանշում են Արարչին հատկանշական գործողություններ:

Վերոհիշյալ օրինակները պարզորոշ ցույց են տալիս, որ բառական հավելադրումները, փոփոխելով սերիչ կաղապարների բաղադրիչների քանակային կազմը, միաժամանակ փոփոխություն են առաջ բերում կապակցության իմաստի շրջանակներում: Քանակային այս տարբերակները բնութագրվում են իմաստային մերձավորությամբ: Նկատելի է իմաստի սաստկացում (**Աստված ողջ պահի** և **Աստված ողջ և առողջ պահի**), կոնկրետացում (**Աստված արևդ պահի** և **Աստված կանաչ ու կտրին արևդ պահի**, **Աստված կյանք տա** և **Աստված երկար կյանք տա**) և այլն:

Բ. ԲԱՌԱՅԻՆ (ՀՈՄԱՆՇԱՅԻՆ) ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ: Քանակային տարբերակներում, ինչպես տեսանք, իմաստային սերտ աղերսակցությունը հանգեցնում է հոմանշային հարաբերության: Այլ են հոմանշային տարբերակները: Քանակական կազմով համընկնելով՝ սրանք ձևավորվում են կապակցության այս կամ այն բաղադրիչը որևէ հոմանիշով փոխարինելու ճանապարհով:

Աստված բաղադրիչով կայուն կապակցություններում հոմանիշներով փոխարինվում են թե՛ անվանական և թե՛ բայական բաղադրիչները:

Բառային տարբերակներում **Աստված** բաղադրիչի փոխարեն հանդես է գալիս Աստծո Ռրդու անունը՝ **Քրիստոս**, ավելի քիչ՝ **Հիսուս**, ինչպես՝ **Աստված//Քրիստոս** գիտե, **Աստված//Քրիստոսը//Հիսուսը** վկա, **Աստծո//Քրիստոսի** մոտ ուղարկել, **Աստծո//Քրիստոսի** սիրուն, ի սեր **Աստծո//Քրիստոսի**, տուն **Աստուծոյ//Քրիստոսի** և այլն:

Աստված//Տեր հոմանշային գույգով ևս նույնատիպ տարբերակներ են կազմվում, ինչպես՝ **Աստված//Տերը** քեզ հետ, **Աստծո//Տիրոջ** կամքով, փառք **Աստծո//Տիրոջը** և այլն:

Հազվադեպ գործածվում է **Բարձրյալ** հոմանիշը, օրինակ՝ փառք **Աստծո (Տիրոջը) Բարձրյալին** (նաև՝ **Բարեբարին**):

Հայերենում ինքնուրույնաբար (ինչպես նաև այլ լեզուների ազդեցությամբ) կազմվել են նաև բազմաթիվ կապակցություններ, որոնցում հանդիպում են այլ սրբանուններ, «Աստված» անուններ, ինչպես՝ **Ալլահը** վկա, **Ռոմիզդը** քեզ օգնական, **Մուհամմեդի** գիրկը ուղարկել, փառք **Եհովային**, **Եհովայի** կամքով և այլն⁵:

Նկատելի է, որ հոմանիշներով կարող էին փոխարինվել կապակցությունների ոչ բայական (մեծ մասամբ՝ անվանական) այլ բաղադրիչներ ևս, ինչպես՝ **Աստծու** երկյուղը//վախը սրտում (չկա), **Աստված** մեկի կյանքը//արևը երկար անի, **Աստծո** տուն//տաճար, **Աստծու** կրակ//պատիժ, **Աստված** բազկիդ ուժ//գործություն տա և այլն: Ընդ որում, այստեղ հանդիպադրվում են լեզվական տարբեր գոյավիճակների դարձվածային միավորներ, օրինակ՝ արևելահայ. **Աստծո** մոտ գնալ և արևմտահայ. (նաև բրբ.) **Աստծու** քով երթալ, **Աստված** ավելի վատից//բրբ. բեթարից ազատի, **Աստված** բազկիդ (թևերիդ) // բրբ. կռներիդ ուժ տա և այլն:

Հոմանիշ տարբերակներում, ինչպես վերը նշեցինք, հանդես են գալիս նաև մերձիմաստ բայեր՝ **Աստծո** տվածով կերակրվել//հյուրասիրվել, **Աստված** հեռու անի՝ տանի՝ պահի//ազատի և այլն: Այս վերջին օրինակում բայական անդամը վերլուծական կազմությամբ մի տարբերակ ունի (**հեռու** անել), մի բան, որ տեսնում ենք այլուր. **Աստված** մի դուռ կբացի//կբանա և բաց կանի, **Աստված** արժանացնի//արժանի անի: Այստեղ էլ կան գրական և բարբառային իրողությունների հակադրություններ, ինչպես՝ **Աստված** քաղցր աչքով նայի// բրբ. մտիկ անի, **Աստված** կվերցնի// բրբ. վեր կունի: Ընդհանրապես նկատելի է, որ վերլուծական ձևերը ժողովրդական խոսքին են գերազանցապես բնորոշ:

Իբրև հավելում նշենք, որ հոմանշային տարբերակների կողքին կան մի քանի հականշային կաշուն կապակցություններ, ինչպես՝ թարգմանական **Աստծու** առավոտ (օր) «ամեն առավոտ՝ օր» և **Աստծու** գիշեր «ամեն գիշեր», **Աստծու** կրակ «չար մարդ» և **Աստծու** գառ «հեզ, խոնարհ, անմեղ, անվնաս մարդ»: Հականշությունը հիմնվում է բաղադրիչ միավորների արտահայտած հակադրական իմաստների վրա: Երկրորդ գույգում, բնականաբար, **կրակ** և **գառ** բառերը փոխաբերական իմաստներով են մտել դարձվածքների մեջ:

⁵ Անհրաժեշտ է նշել, որ այսպիսի կառույցները մեծ մասամբ ընդհանուր են շատ լեզուներում. դրանք, այսպես կոչված, «միջազգայնացված» կապակցություններ են: Հմմտ. հայ. Աստված գիտի, ռուս. Бог знает!, գերմ. Gott weiß!, հայ. փառք Աստծո, ռուս. Слава Бogy, լատ. Domino gratias, հայ. Տեր ընդ ձեզ, ռուս. Господь с вами, լատ. Dominus vobiscum և այլն:

Գ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ: Սրանք առաջանում են կայուն կապակցությունների այս կամ այն բաղադրիչի քերականական զուգաձևության (տարբերակայնության) հիման վրա: Այդ զուգաձևությունները վերաբերում են թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական մակարդակներին: Ըստ այդմ էլ տարբերակում ենք երկու ենթախումբ.

ա) Ձևաբանական կարգերի զուգաձևությամբ տարբերակներ: Ձևաբանական տարբերակների եզրերում ունենք բառաձևային տարբերակներ՝ հոլովման և խոնարհման: Այսպես՝ **Աստված** բաղադրիչի սեռական հոլովի զուգաձևությունը տարբերակների գոյացման պատճառ է դարձել՝ **Աստծո//Աստծու դատաստան, Աստծո//Աստծու պատիժ, Աստծո//Աստծու տուն, Աստծո//Աստծու աչքը մեկի վրա քաղցր պահել** և այլն, ընդ որում երկրորդ ձևերը հնացած են դիտվում:

Հոլովական զուգաձևություններ են դրսևորվում նաև դարձվածային միավորների գրական և բարբառային ձևերում. հմմտ. **Աստծու երեսից//երեսեն ընկնել, Աստված հախներից//հախներեն գա** և այլն:

Գոյական բաղադրիչները կարող են հանդես գալ եզակի-հոգնակի տարբերակներով, ինչպես՝ **Աստծու փեշերը//փեշը կտրտել, Աստծու փեշերը//փեշը բռնել** և այլն:

Տարբերակներ գոյանում են նաև կապակցությունների բայական բաղադրիչների քերականական տարբեր ձևերով պայմանավորված: Նկատվում է եղանակային ձևերի՝ ըղձականի և պայմանականի զուգաձևություն, օրինակ՝ **Աստված տա//կտա, Աստված սիրես//կսիրես**: Դարձվածային տարբերակներ են առաջանում նաև բայի դրական և ժխտական ձևերի հակադրության միջոցով, օրինակ՝ **Աստված աչքից անպակաս անի//Աստված աչքից պակաս չանի**: Եթե այստեղ կա բայի եղանակա-ժամանակային ձևերի ընդհանրություն, ապա իրողությունն այլ է **Աստված հոգիս առնի// $\approx$ չի առնում** տարբերակներում, որոնք նշանակում են «մեռնեմ-ազատվեմ», «մի բան հաստատելու երդման բանաձև»:

Բազմաթիվ կապակցություններ վկայվել և առ այսօր էլ ժողովրդական խոսքում գործածվում են ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի զուգահեռ վերջավորություններով՝ **-ե// -ի**, ինչպես՝ **Աստված մեկդ հազար անե//անի, Աստված օրհնե//օրհնի, Աստված փրկե//փրկի**:

Շարահյուսական տարբերակներն առաջանում են կառույցի արտահայտության պլանում շարահյուսական կարգերի տարբերակայնության վրա: Այսպես, դիմային համաձայնության տարատեսակներով են պայմանավորված հետևյալ տարբերակները՝ **Աստված ինձ//քեզ//նրա//իր հետ, Աստված մեզ//քեզ//ձեզ պահապան, Աստված քեզ//նրան ների** և այլն:

Մի շարք կապակցություններում տարբերակների առաջացումը կապվում է առկայացման կարգի հետ՝ **Աստված//Աստվածն իր մոտ կանչեց, փառք Աստծո//Աստծուն** և այլն, մի քանիսն էլ՝ ստացականության կարգի՝ **Աստծո կրակը թափվի գլխիս//գլխիդ//գլխին, Աստված մեկը//մեկդ հազար անի**: Իսկ **Աստված//Աստվածդ կսիրես** տարբերակներում առկա է անորոշ դիմային և ստացականության կարգերի հակադրություն:

Դ. ՇԱՐԱԴԱՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ: Նկատվել է, որ կայուն կապակցությունները (այդ թվում և դարձվածքները) շարահյուսության տեսակետից զգալապես կայուն են, և շատ հաճախ գրեթե անհնարին է կապակցության բաղադրիչների որևէ տեղաշարժ: Այսուամենայնիվ, այդպիսիք կան,—նաև հետազոտվող խմբում,—և հանդես են գալիս երկտեսակ շարահյուսությամբ՝

կազմելով տարբերակներ: Օրինակ՝ **Աստված տա//տա Աստված, Աստծուն փառք//փառք Աստծուն, մարդ Աստծո//Աստծո մարդ** (հմմտ. Քանի որ ազնիվ էր **Աստծո մարդը**, Տերը ցանկացավ, որ նա բազմանա.— «Փետրվար» շաբաթաթերթ, 19 մայիս, 1993):

Ե. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ: **Աստված** բաղադրիչով մի քանի կայուն կապակցություններ որոշակիորեն առանձնանում են վերոհիշյալներից. սրանք կարելի է դիտարկել իբրև կառուցվածքային տարբերակներ⁶: Օրինակ՝ **ի սեր Աստծո//Աստծու սիրուն, Աստված ձեզ հետ//Աստված ընդ ձեզ, Աստված մի՛ արասցե//Աստված չանի**:

Կառուցվածքային տարբերությունները մեծ մասամբ կապվում են հայերենի տարբեր գոյավիճակների (գրաբար, միջին հայերեն, արևելահայ և արևմտահայ աշխարհաբար) քերականական կառուցվածքի առանձնահատկությունների հետ: Անշուշտ հարկ է նշել, որ տարբերակների վերջին երկու տեսակները՝ շարադասական և կառուցվածքային, սերտորեն առնչվում են շարահյուսական տարբերակներին, ինչ-որ տեղ նույնիսկ նրա սահմաններում կարող են զետեղվել:

Այսպիսով՝ առաջադիր հարցի շրջանակներում ձևաիմաստային քննության ենթարկվեց **Աստված** բաղադրիչով կայուն կապակցությունների մի խումբ, որի ներսում բացահայտվեցին հետաքրքրություն ներկայացնող իրողություններ՝ սերիչ կաղապարներ և բազմապիսի տարբերակներ՝ քանակային, բառական, քերականական, շարադասական և կառուցվածքային՝ իրենց զանազան դրսևորումներով:

Աստված բաղադրիչով կայուն կապակցությունները իմաստային և գործառական լայն ընդգրկում ունեն ինչպես արդի գրական հայերենում, այնպես էլ ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում: Բազմաշերտ, նյութավորումներով հարուստ դարձվածային այս խումբն իր ներսում լեզվաբաններին հետաքրքրող շատ նյութ ունի դեռևս:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Բուզ.—Փաստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եղ.—Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

ԶԽ.—Զ. Խալափյան, Որտե՞ղ էիր, մա՛րդ Աստծո, Երևան, 1966:

ՊԱ.—Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972:

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Դ. Ս. ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

⁶ Հմմտ. Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 215: